ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 10-Լ

26.09.2019թ. ք. Երևան

Ղեկավարվելով ՀՀ Տեսչական մարմինների մասին ՀՀ օրենքի 7-րդ կետի, 1.1 ենթակետով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 08.08.2019թ-ի, N 1000-Ն որոշման, 24-րդ կետը և ՀՀ վարչապետի 2018թ. հունիսի 11-ի թիվ 730-Լ որոշման հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով՝ Կառավարման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի N 2399-ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծին հավելվածի:

Կառավարման խորհրդի նախագահ ՖԵԼԻՔՍ ՑՈԼԱԿՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

Հայաստանի Հանրապետության կառավարության
2005 թվականի դեկտեմբերի 22-ի N 2399-ն որոշման մեջ
փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»
ՀՀ կառավարության որոշման նախագիծ ,
հաստատված է ՀՀ Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային
անվտանգության տեսչական մարմնի,
կառավարման խորհուրդի 26.09.2019թ-ի 7-Լ որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

_____ 2019 թվականի N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 2399-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. ««Անվտանգության կանոնները գազի տնտեսությունում» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի N 2399-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Որոշման հավելված N 13-ի վերնագիրը «պահեստարաններից» բառից հետո լրացնել «և լցարկիչներից» բառերով.

2) Որոշման հավելված N 13-ի աղյուսակը (այսուհետ՝ Աղյուսակ) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1-ին տողով.

1	մինչև 50	10 20 50	50 60 70	25 30 35

3) Աղյուսակի հետագա համարակալումն իրականացնել ըստ առաջարկվող լրացման:

2. Որոշումը լրացնել N 41, N 42 և N 43 հավելվածներով՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ն. Փաշինյան

Հավելված
Հայաստանի Հանրապետության կառավարության
2019 թվականի _____ N -Ն որոշման

Հավելված N 41
«Անվտանգության կանոնները գազի
տնտեսությունում» տեխնիկական
կանոնակարգի

Նվազագույն հեռավորությունները ԱԳԼՃԿ-ից (կոմպրեսոր, կուտակիչ, լցարկիչ) մինչև ԱԳԼՃԿ-ին չպատկանող շենքերն ու շինությունները (մ)

1. Բնակելի և հասարակական շենքեր.....50
2. Մշակութային կազմակերպություններ, մանկական և բուժ. կազմակերպություններ, ուսումնական հաստատություններ.....75
3. Արտադրական շենքեր.....50*
4. Հրդեհապայթունավտանգ, քիմիական և ռադիոակտիվ վտանգավոր նյութեր պարունակող շենքեր և տեխնոլոգիական սարքավորումներ.....75
5. Ընդհանուր ցանցի երկաթուղիներ (լիրքի ստորոտից).....50
6. Մերձատար երկաթուղիներ.....30
7. Ավտոմոբիլային ճանապարհներ (մինչև երթուղու եզրը).....12**
9. ԱԳԼՃԿ-ից մինչև այն վայրերը, որտեղ միաժամանակ կարող են գտնվել 800 մարդուց ավելի (մարզադաշտերը, շուկաներ, զբոսայգիներ և այլն), սույն հավելվածի 1. և 2. ենթակետերում նշված հեռավորությունները պետք է ավելացնել 2 անգամ:

* Նշված հեռավորությունը կարող է նվազեցվել մինչև 30մ, պայմանով, որ պաշտպանվող օբյեկտը ԱԳԼՃԿ-ի ուղղությամբ ունենա հակահրդեհային խուլ պատ, կամ կկառուցվեն պատնեշներ, որոնք կբացառեն գազի շիթի և բեկորների արտանետումը հորիզոնական ուղղությամբ դեպի պաշտպանվող օբյեկտ:
** Միջպետական և հանրապետական ճանապարհների դեպքում անհրաժեշտ է առանջնորդվել ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005 թվականի N 2404-Ն որոշմամբ:

Հավելված N 42
«Անվտանգության կանոնները գազի
տնտեսությունում» տեխնիկական
կանոնակարգի

Նվազագույն հեռավորությունները ԱԳԼՃԿ-ի տարածքում իրեն պատկանող շինությունների և սարքավորումների միջև (մ)

1. Գազի կուտակիչներից մինչև՝

- կոմպրեսորային կայան.....կոմպրեսորային կայանի բարձրությունից առնվազն 1,5մ ավելի
- լցավորման սյունակներ.....15
- ավտոտեխսպասարկման շենքեր, ավտոլվացման կետեր, կաթսայատուն, պահեստներ.....30
- տարածքի ցանկապատ.....5

2. Կոմպրեսորային կայանից մինչև՝
- լցավորման սյունակներ.....6
- ավտոտեխսպասարկման շենքեր, ավտոլվացման կետեր, կաթսայատուն, պահեստներ.....25

3. Լցավորման սյունակներից մինչև ավտոտեխսպասարկման շենքեր, ավտոլվացման կետեր, կաթսայատուն, պահեստներ.....20

4. Սպասասրահից, սննդի կետից և սանիտարական հանգույցից մինչև՝
- լցավորման սյունակներ.....20
- կոմպրեսորային կայան.....25
- գազի կուտակիչներ.....35

5. Օպերատորական շինությունից մինչև գազալցակայանին պատկանող շինություններ և տեխնոլոգիական սարքավորումներ.....9

Գազի կուտակիչները պետք է տեղադրել ստորգետնյա:

Լցավորման մեկ կղզյակում միաժամանակ պետք է լցավորել ոչ ավել քան մեկ ավտոմեքենա:

Լցավորման կղզյակները պետք է իրարից բաժանել պաշտպանական էկրանով՝ բետոնե պատով:

Հավելված N 43
«Անվտանգության կանոնները գազի տնտեսությունում» տեխնիկական կանոնակարգի

Նվազագույն հեռավորությունները ԱԳԼԿ-ների և համատեղված (հեղուկացված ածխաջրածնային գազ, սեղմված բնական գազ, բենզին, դիզելային վառելանյութ) լցակայանի տարածքում իրեն պատկանող շինությունների և սարքավորումների միջև (մ)

1. Օպերատորական շինությունից մինչև գազալցակայանին պատկանող շինություններ և տեխնոլոգիական սարքավորումներ.....9

2. Սպասասրահից, սննդի կետից և սանիտարական հանգույցից մինչև՝
- ՀԱԳ լցավորման սյունակներ.....15
- ՀԱԳ գազամբարներ.....20

3. ՀԱԳ լցավորման սյունակներից և ՀԱԳ գազամբարներից մինչև ավտոտեխսպասարկման շենքեր և ավտոլվացման կետեր.....20

4. ՀԱԳ լցավորման սյունակներից մինչև սեղմված բնական գազի և բենզինի լցավորման սյունակներ.....4

5. Սեղմված բնական գազի լցավորման սյունակներից մինչև բենզինի լցավորման սյունակներ.....8

6. ՀԱԳ ստորգետնյա գազամբարներից և հեղուկ վառելանյութի ստորգետնյա տարողություններից մինչև ԱԳԼՃԿ-ի կուտակիչներ.....10

7. ՀԱԳ ստորգետնյա գազամբարների և հեղուկ վառելանյութի ստորգետնյա տարողությունների միջև հեռավորությունը պետք է լինի՝

- վերգետնյա տարողությունների միջև.....մոտակա ամենամեծ տարողության տրամագծից ոչ պակաս, բայց առնվազն 2 մ,
- ստորգետնյա տարողությունների միջև.....մոտակա ամենամեծ տարողության տրամագծի կեսից ոչ պակաս, բայց առնվազն 1 մ:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԳԱԶԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ» ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 2399-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

Անհրաժեշտությունը. ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի N 2399-ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) հաստատված տեխնիկական կանոնակարգում լրացումներ և փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Հայաստանի Հանրապետությունում ավելացել է հեղուկ գազով լցակայանների պահանջարկը, որոնք նախատեսվում և կառուցվում են ինչպես առանձին, այնպես էլ գոյություն ունեցող բենզալցակայանների կամ ավտոմեքենաների գազալցման ճնշակայանների (այսուհետ՝ ԱԳԼՃԿ) տարածքներում:

Եզրակացություններ տրամադրելու, հնարավոր բարդություններից զերծ մնալու, անհրաժեշտ կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու և հարակից տարածքում բնակվող բնակիչների անվտանգությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է փոփոխություններ և լրացումներ կատարել համապատասխան նորմատիվ իրավական ակտերում:

Ընթացիկ վիճակը. Հրդեհային և տեխնիկական անվտանգության ոլորտին առնչվող գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերում ոչ լիարժեք են սահմանված ԱԳԼՃԿ-ների և մեկ լցակայանի տարածքում տարբեր տիպի վառելանյութերով (սեղմված բնական գազ, հեղուկ գազ, բենզին, դիզել և այն) լցավորման պահանջները:

Ակնկալվող արդյունքը. Որոշման նախագծի ընդունմամբ կնորմավորվեն և կհստակեցվեն լցակայանների հեռավորությունները այլ շինություններից, գործող և նոր կառուցվող համատեղված

լցակայանների տարածքում լցակայանին պատկանող շինությունների և սարքավորումների միջև հակահրդեհային միջտարածությունները:

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք. Որոշման նախագիծը մշակվել է ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք N 1

««ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԳԱԶԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ» ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 2399-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Որոշման նախագծի ընդունման կապակցությամբ անհրաժեշտություն է առաջանում փոփոխություններ և լրացումներ կատարելու ՀՀ քաղաքաշինության նախարարի 2004 թվականի մարտի 26-ի № 29-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ IV-12.03.01-04 «Գազաբաշխիչ համակարգեր» շինարարական նորմերում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք N 2

««ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԳԱԶԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ» ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 2399-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում եկամուտների և ծախսերի էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում: